# ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ԿՅԱՆՔՍ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻՍ, ՀՈԳԻՍ՝ ԱՍՏԾՈՒՆ, ՊԱՏԻՎՍ՝ ԻՆՁ

Թիվ 6(13), 31 հոկտեմբերի, 2018թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ


## ԱՊԱԳԱ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԵՐԴՈՒՄ ՏՎԵՑԻՆ

2018թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի նախնական մասնագիտական կրթության «ոստիկան» որակավորման եռամսյա դասընթացի սովորողները երդվեցին ծառայել Հայաստանի Հանրապետությանը:

Երդման տեքստն ընթերցելով՝ նրանք ուխտեցին անմնացորդ նվիրվել օրենքին, պետությանը և ժողովրդին:

Երդման հանդիսավոր արարողությանը ներկա էին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ.Բաբայանը, կրթահամալիրի ղեկավար կազմը, ուսումնական կենտրոնի անձնակազմը, ինչպես նաև սովորողների հարազատները:

Երդում տալու կապակցությամբ Կրթահամալիրի պետը շնորհավորեց սովորողներին, ինչին հաջորդեց երդման արարողության հանդիսավոր երթը:

## «Pour toi, Charles Aznavour- Քեզ համար, Շա՛ռլ Ազնավուր»

Երբ մահանում է հանճարը, լռում է աշխարհի աղմուկը, երկրագունդը սգում է նրա մահը:

Հանրաճանաչ ու տաղանդաշատ շանսոնյեն, սիրված լինելով աշխարհի բոլոր անկյուններում, գրեթե մեկ դար ապրեց իր Բոհեմյան երկար ու գեղեցիկ կյանքը: Լինելով փախստականների ընտանիքից, հաղթահարելով բազմաթիվ խոչընդոտներ՝ այսօր արդեն գերել է աշխարհին իր յուրահատուկ ձայնով, մարդկային տեսակով, անկեղծությամբ և հայ ժողովրդի հանդեպ իր այդքան մեծ նվիրվածությամբ: «Ես հավատում եմ, որ վերջին ժողովուրդը, որ մնալու է երկրագնդի երեսին, հայերն են լինելու», -հարցազրույցներից մեկում նշել էր նա:

Հայ ժողովրդի համար անասելի ցավ է ազգային հերոս Շառլ Ազնավուրի կորուստը: Երևանի Շառլ Ազնավուրի անվան հրապարակում մարդիկ չեն դադարում ծաղիկներ խոնարհել նրա հիշատակին:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը ևս իր հարգանքի տուրքը մատուցեց մեծանուն երգչի հիշատակին՝ միանալով սգացող հայ ժողովրդին, ծաղիկներ խոնարհելով և մասնակցելով մոմավառությանը:

## ՉԻՆԱԿԱՆ ԿՈՂՄԻ ՀՐԱՎԵՐՈՎ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԵՏԻ ԱՅՑԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2018թ. հոկտեմբերի 8-ից 16-ը Չինաստանի մայրաքաղաք Պեկինում տեղի ունեցան Չինաստանի ազգային ոստիկանության համալսարանի 70-ամյակին նվիրված տոնակատարությունները, ինչպես նաև դրա շրջանակներում կազմակերպված «Հավաքական անվտանգության կառավարման ընդլայնում և ոստիկանության կրթության բնագավառում համագործակցության խթանում» խորագրով 10-րդ ոստիկանական միջազգային ֆորումը: Միջազգային այս հեղինակավոր միջոցառմանը մասնակցելու նպատակով մեկնեղվել էին Եվրոպայի և Ասիայի երեսունից ավելի երկրների, ինչպես նաև Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մի շարք ոստիկանական առաջատար ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ:

Չինական կողմի հրավերով ֆորումին մասնակցեց նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ.Բաբայանը, ով միջոցառման ընթացքում ելույթ ունեցավ «Ոստիկանության կադրերի պատրաստման բնագավառում միջազգային համագործակցության ակտիվացումը որպես համաշխարհային անվտանգության ապահովման կարևորագույն տարր» զեկույցով:

«Համաշխարհային անվտանգության հավանական վտանգների, ապագա մարտահրավերների մասին հասարակությունը պետք է մտածի հենց այսօր: Անվտանգության ոլորտի կատարելագործումը, արդյունավետության բարձրացումը ներկայումս պահանջում է ռազմավարական նոր մտածողություն և կազմակերպա-իրավական նոր գործիքակազմի ներդրման հնարավորությունների ուսումնասիրում: Անդրազգային հանցավորության քանակական և որակական փոփոխությունները բոլորիս կանգնեցրել են դրանց դեմ պայքարի առավել արդյունավետ եղանակների և մեթոդների որոնման, կիրառման համատեղ գործունեության անխուսափելիության փաստի առաջ»,- իր ելույթում նշեց Մ.Բաբայանը՝ ներկայացնելով ոստիկանական կադրերի պատրաստման ոլորտում միջազգային համագործակցության կազմակերպման՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի մոտեցումները:

Միջոցառման շրջանակներում տեղի ունեցան երկկողմ հանդիպումներ Չինաստանի ազգային ոստիկանության համալսարանի նախագահ Ցաո Շիցուենի, Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի, Իտալիայի, Պորտուգալիայի Հանրապետությունների ոստիկանական ուսումնական հաստատությունների պետերի հետ, որի ընթացքում ձեռք բերվեցին բանավոր համաձայնություններ հետագա համագործակցության նախադրյալներ ստեղծելու վերաբերյալ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի համար ոստիկանության գեներալ-մայոր Մ.Բաբայանի այցն արդյունավետ էր նաև բազմակողմ համագործակցության նոր հնարավորությունների ստեղծման առումով: Նախանշված ծրագրերի համաձայն՝ միջազգայնացման գործընթացների շրջանակներում ՀՀ ոստիկանության կրթահամալիրը դարձավ շուրջ երեսուն երկրների ոստիկանական ուսումնական հաստատություններ միավորող «Ոստիկանական կրթական համագործակցության միջազգային ֆորումի» կառավարման խորհրդի անդամ, որի շրջանակներում ստորագրվեց համագործակցության հայտարարագիր:

## ՆՈՐ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ ՆՎԱՃԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

2018թ. օգոստոսի 27-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում մշտական անձնակազմի մասնակցությամբ կայացավ նոր ուսումնական տարվա անդրանիկ խորհրդակցությունը:

Բացման խոսքով հանդես եկավ կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ Տ. Եսայանը, ով անձնակազմին ներկայացրեց կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մուշեղ Բաբայանի անցած ծառայողական ուղին: Այնուհետև ելույթ ունեցավ Մ. Բաբայանը, ով, ողջունելով ներկաներին, ներկայացրեց կրթահամալիրի զարգացման իր տեսլականը և դրա իրականացման ուղիներն ու անհրաժեշտ գործընթացները: Իր ելույթում կրթահամալիրի պետը մասնավորապես նշեց.

«Ես եկել եմ պահպանելու դրական ձեռքբերումները, վերացնելու թերությունները և նոր շունչ, նոր որակ տալու և ստանալու կրթահամալիրից: Ինձ համար թանկ են բոլոր նրանք, ովքեր նվիրված կծառայեն կրթահամալիրին, ոստիկանությանը և հայրենիքին, ովքեր հավատարիմ կլինեն ոչ թե ինձ կամ որևէ այլ անձի, այլ այն պատվաբեր մասնագիտությանը, որն ընտրել են, որի կրողն են: Կրթահամալիրի կոչումը ոստիկանության համակարգին բարձրորակ կադրերով ապահովելն է: Որակյալ կադրը պետք է համապատասխանի հետևյալ չափանիշների՝ լինի անկաշառ և անաչառ, արդարամիտ, հայրենասեր,գրագետ և արհեստավարժ:

Նշված հատկանիշներով կադրեր պատրաստելու համար կոռուպցիայի, կոռուպցիոն դրսևորումների և ռիսկերի իսպառ բացառման, սեփական օրինակով արդարամտություն սերմանելու, մասնագիտական կարողությունները կատարելագործելու ուղղությամբ ջանք ու եռանդ չենք խնայելու:

Պետք է լավ գիտակցել, որ եթե խնդիր ենք դնում պատրաստել ոստիկանության անկաշառ կադրեր, ապա կոռուպցիայի դեմ ատելությունը նրանց մեջ պետք է սերմանենք հենց կրթահամալիր մտնելու առաջին օրվանից:

Տես՝ էջ 2

# ՆՈՐ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ ՆՎԱՃԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

**Սկիզբը՝ էջ 1**

Բացի հանրապետությունում կիրառվող համընդհանուր նախազգուշական, կանխիչ և պատժողական մեխանիզմներից, կրթահամալիրում նախաձեռնվելու և կիրառվելու են տեղայնացված կոնկրետ միջոցառումներ:

Արդարամիտ ոստիկաններ կրթելու համար հենց այսօրվանից մեր օրինակով պետք է ցույց տանք արդար վարվելու, արդար գնահատելու, արդար գործելու անհրաժեշտությունը: Մենք հոգեբանորեն կփչացնենք ապագա ոստիկանին, եթե ինքն անձամբ կրթահամալիրում բախվի անարդարության կամ ականատես լինի նման իրավիճակների: Անվիճելի է, որ ամենաարդար, ամենաանկաշառ և արհեստավարժ ոստիկանի, շրջանավարտի պարագայում կրթահամալիրի կատարած աշխատանքները և շրջանավարտի որակները պետք է գնահատել զրո, եթե ոստիկանը հայրենասեր չէ: Մենք մեր սովորողների մեջ ոչ թե սերմանելու ենք հայրենասիրություն, այլ օգնելու ենք, որպեսզի իրենք ճանաչեն իրենց, իսկ որ բոլորիս մեջ գենետիկորեն հայրենասեր հայն է վառվում, փաստ է: Մեր յուրաքանչյուր քայլով պետք է ամրապնդենք սերը հայրենիքի, ընտանիքի, ծնողի, երեխայի, ինչպես նաև վերջին ամիսներին հասարակության ձեռքբերումների, ազատ խոսքի, ժողովրդի իշխանության նկատմամբ:

Որակյալ կրթություն ապահովելու նպատակով խնդրում և պահանջում եմ թարմացնել դասախոսությունները, առարկայական ծրագրերը և ամեն օր աշխատել մասնագիտական գիտելիքների խորացման և պրակտիկ փորձի ուսումնասիրության վրա: Մտադիր եմ ուսումնական գործընթացին առավելագույնս ներգրավել փորձառու և պրակտիկ աշխատողներին, ինքս էլ պատրաստ եմ իմ փորձը ներդնել: Մենք հայտարարում ենք ուսումնական և գիտական աշխատանքները որպես կրթահամալիրի առաջնահերթություններ: Կրթահամալիրի շարժիչ ուժը դառնալու է դասախոսական, ուսումնական, գիտամեթոդական անձնակազմը: Սա նաև նոր մարտահրավեր է դասախոսական կազմի համար, նոր պատասխանավություն է, քանի որ այսուհետ պահանջելու ենք առավել որակյալ ուսումնագիտական գործընթաց, ավելի բարձր գիտելիքներ, չենք հանդուրժելու ալարկոտություն և ոչ արհեստավարժ մոտեցում: Կրթահամալիրում իրավիճակի տերը դառնալու են կրթությունն ու գիտությունը զարգացնողները»:

Հաջորդիվ ելույթ ունեցան կրթահամալիրի պետի տեղակալները և ուսումնական ստորաբաժանումների պետերը, ովքեր ներկայացրին առաջարկություններ՝ ուսումնական գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Խորհրդակցության ավարտին ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը ՀՀ ոստիկանության պետի հրամանով սպայական հերթական կոչում ստացած կրթահամալիրի ծառայողներին հանձնեց նոր ուսադիրներ, ինչպես նաև՝ ոստիկանությունում երկարամյա ծառայության համար երրորդ աստիճանի մեդալ:

# ՀԱՂԹԱՆԱԿԻ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրում գործող ֆրանսերենի ակումբը ևս մասնակցեց ֆրանսերեն դասավանդողների միջազգային կազմակերպության (FIPF) 50-ամյակին նվիրված ֆրանսերենի դասը ներկայացնող լուսանկարների մրցույթին՝ կազմակերպությանն ուղարկելով երեք լուսանկար: Մրցույթը հայտարարված է «Et en plus, c'est sympa d'apprendre le français!» (ֆրանսերեն սովորելը նաև հաճելի է) աշխարհում բոլոր ֆրանսերեն դասավանդողների համար, և հաղթող 12 լուսանկար պետք է ընդգրկվի FIPF-ի 50-ամյակին նվիրված օրացույցում: Մրցույթի արդյունքներն ամփոփվելու են 2018թ. դեկտեմբերին:

**Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Լեզուների ամբիոնի պետ,**
**ոստիկանության գնդապետ**

# ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍԱՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹ-ԴԱՏԱԽԱՂԻՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը սույն թվականի հուլիսին մասնակցության հայտ էր ներկայացրել Միջազգային համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կողմից կազմակերպվող քրեական իրավունքի և քրեական դատավարության հիմնախնդիրներին նվիրված մրցույթ-դատախաղին:

Կրթահամալիրի «Օրենքի պատվար» թիմի կազմում ընդգրկված էին ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 2-րդ կուրսի սովորողներ Լիդիա Մանուկյանը, Մարիամ Ղազարյանը, Լյուբա Չախալյանը և իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի սովորող Հայկ Խաչատրյանը (թիմի մարզիչ՝ քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, ի.գ.թ., դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ Միսակ Մարկոսյան):

Դատախաղի գրավոր փուլին մասնակցած 9 թիմերի շարքում կրթահամալիրի թիմը զբաղեցրել էր 3-րդ տեղը և լավագույն 6 թիմերի շարքում անցել դատախաղի բանավոր փուլ, որն անցկացվեց Աղվերանում հոկտեմբերի 5-ից 7-ը: Դատախաղի բանավոր փուլում հաղթող ճանաչվեց «ԵՊՀ-1» թիմը:

Կրթահամալիրի թիմի անդամ, իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի սովորող, ոստիկանության ավագ սերժանտ Հայկ Խաչատրյանն արժանացավ ՀՀ արդարադատության ակադեմիայի կողմից սահմանված «Լավագույն հռետոր» հատուկ մրցանակի:

# ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՁԵՌՔՈՒՄ Է ԵՐԿՐԻ ԱՊԱԳԱՆ

***«Կրթությունն ամենահզոր զենքն է, որ դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար»***
***Նելսոն Մանդելա***

Ուսուցչի փառաբանության խոր ավանդույթներ ունեն քաղաքակիրթ բոլոր ժողովուրդները, իսկ հայ ժողովուրդը գրի ու գրականության, գիտության ու կրթության նկատմամբ միշտ էլ աչքի է ընկել իր մեծ սիրով ու ակնածանքով: Ավելի նշանակալի ու պատվաբեր քիչ կոչում ու դիմելաձև կար հայ ազգի մեջ, քան «ուսուցի՛չ»: Հայաստանի անկախ Հանրապետությունում, 1990-ականներից սկսած, հոկտեմբերի առաջին կիրակին նշվում էր որպես Ուսուցչի օր: Այսօր արդեն հոկտեմբերի 5-ն Ուսուցչի համաշխարհային օրն է, որը սահմանվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից:

Մեր հասարակությունը նվիրյալ ուսուցիչների կարիք շատ ունի: Ուսուցիչը կոչված է իր աշակերտին կրթելու, դաստիարակելու այնպես, որ դպրոցի ցանկացած շրջանավարտ պատրաստ լինի պաշտպան կանգնելու հայրենիքին ու լինի մեր նորանկախ հանրապետության արժանի քաղաքացի:

Ո՞վ է ուսուցիչը. մեկը, որ սովորեցնում է սեփական օրինակով՝ տալով ոչ միայն հանրագիտարանային ճշմարտություններ, այլև սովորեցնելով ճանաչել չարն ու բարին, ազնիվն ու գեղեցիկը, ճիշտն ու սխալը: Ուսուցիչը կրթում է երեխայի միտքն ու սիրտը, նպաստում նրա աշխարհայացքի ձևավորմանը, նրա առջև բացում գիտության ու գրականության խորհրդավոր դռները, աշակերտին սովորեցնում զարմանալ՝ միևնույն ժամանակ նույնը սովորելով նաև նրանից:

Նա մեզ տալիս է թևեր, թևեր՝ մտքով ճախրելու, նորանոր բարձունքների հասնելու համար: Ուսուցիչը սովորեցնում է ամենակարևորը՝ սովորել, սերմանում սովորելու, նորն իմանալու ցանկություն, իսկ «առանց ցանկության սովորող աշակերտը նման է թևեր չունեցող թռչունի» (Սադի):

Ուսուցիչների մասին կան անթիվ-անհամար բանաստեղծություններ, երգեր ու թևավոր խոսքեր: Դրանցում ուսուցիչները հաճախ համեմատվում կամ հակադրվում են բժիշկներին ու իրավաբաններին. օրինակ՝ ուսուցչի աշխատանքն ավելի բարձր է գնահատվում, քան բժշկինն ու փաստաբանինը. չէ որ վերջիններս ստիպված չեն լինում իրենց աշխատասենյակում առանց որևէ օգնականի միաժամանակ հոգալու մի քանի տասնյակ մարդկանց ամենատարբեր կարիքները: Ուսուցիչն է, որ ընդունակ է քառասունհինգ րոպեում շփվելու քսան-երեսուն աշակերտի հետ՝ միաժամանակ նրան և՛ սովորեցնելով, և՛ նկատելով նրա վատ տրամադրությունն ու խնդիրները, և՛ սրբելով նրա արցունքները, և՛ լիաթոք ծիծաղելով կամ զայրանալով նրա մանկական չարաճճիության վրա:

Կրթությունը հաջողության բանալին է, իսկ գաղտնիք չէ, որ փոքրիկ բանալին կարող է բացել հսկայական դռներ: Քանի՝ ուսուցիչ է մեր առջև այդպիսի դռներ բացել: Հանրահայտ է Նելսոն Մանդելայի հետևյալ միտքը. «Կրթությունն ամենահզոր զենքն է, որ դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար», իսկ այդ ամենազոր զենքն ուսուցչի ձեռքերում է:

Այն նաև զենք է աշխարհը փոխելու, ապրելու ու արարելու համար այն ավելի լավը դարձնելու համար:

Օրերս, ինչպես ողջ հանրապետությունում, այնպես էլ ՀՀ ոստիկանության կրթահամալիրում, ըստ արժանվույն գնահատվեցին առողջ հասարակություն, պատվախնդիր, հայրենասեր քաղաքացի կերտող ուսուցիչները, ովքեր գործում են հանուն ապագայի և ջանք ու եռանդ չխնայելով՝ իրենց գիտելիքները փոխանցում մատաղ սերնդին: Բազմաթիվ բարեմաղթանքներ ստանալուց անմասն չմնացին նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի դասախոսները: Սովորողների կողմից նրանց ուղղված երախտիքի խոսքերը կատարված աշխատանքի լավագույն գնահատականն էին:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գեներալ-մայոր Մ. Բաբայանը, խրախուսելով ուսման նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքը, գերազանց առաջադիմություն ունեցողներին նվիրեց իր հեղինակած «Ծխացող կարոտ» և «Հորիզոնին չհասած» գրքերը:

«Պապը Գարեգին Նժդեհի զինվորն էր եղել: Գագիկը պապից սովորեց Զորավարի աղոթքը. «Լսի՛ր, Տե՛ր, հայրենազուրկ գաղթականն է քեզ կանչում: Լսի՛ր և մի՛ տանիր զմեզ ի փորձություն՝ մեր սուրբ երկրեն դուրս, օտարի դռանը, օտարի հացով երկար մնալու: Այլ բա՛ց, Տե՛ր, մեզ համար միշտ բա՛ց պահիր բոլոր ճանապարհները դեպ Հայրենիք և մոտեցուր, Տե՛ր, ո՛հ, փութացուր երջանիկ օրը մեր դարձի: Ամե՛ն», - «Ծխացող կարոտ» գրքից հատված է, որն արտացոլում է հայ մարդու ապրումները, հայացքները, մտորումներն ու այն արժեքները, որոնք ջանում է սերունդներին փոխանցել նաև մերօրյա ուսուցիչը:

Մեծարե՛նք մեր Ուսուցիչներին՝ մաղթելով, որ կյանքում նրանց թևերը ոչ ոք չկտրի, որ նրանց միտքը մինչև խոր ծերություն լինի պայծառ, իսկ աչքը՝ ամենատես:

**Տիգրան ԽԱՉԱՏՐՅԱՆ**
**Կրթության որակի ապահովման բաժանմունքի պետ,**
**ոստիկանության ավագ լեյտենանտ**

# «ԱՊՐԵԼ ՄԻԱՍԻՆ». ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

"Francophonie" (ֆրանկոֆոնիա)՝ փոքրատառ "f"-ով, վերաբերում է բնակչությանը և մարդկանց, ովքեր ֆրանսերեն են խոսում իրենց առօրյա կյանքում:

"Francophonie" (Ֆրանկոֆոնիա)՝ մեծատառ "F"-ով, կարող է վերաբերել կառավարություններին, կառավարական և հասարակական կազմակերպություններին կամ ղեկավար պաշտոնյաներին, ովքեր իրենց աշխատանքում օգտագործում են ֆրանսերեն:

"Francophone space", "Francosphere" (Ֆրանկոֆոն տարածք)՝ ներկայացնում է ոչ միայն լեզվական կամ աշխարհագրական իրականություն, այլև մշակութային ամբողջություն, օրինակ՝ նկարագրում է ցանկացած անձի, ով նույնականացվում է ֆրանկոֆոն մշակույթներից մեկի հետ՝ սլավոններ, հյուսիսային Ամերիկա կամ Օվկիանիա:

Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունը (ՖՄԿ/Organisation Internationale de la Francophonie) ֆրանսերենի և համընդհանուր արժեքների ամրագրման և տարածման միջազգային հաստատություն է, որը հիմնադրվել է 1970թ.-ին:

Կազմակերպության կարգախոսն է «Հավասարություն, փոխլրացում, համերաշխություն» (ֆր.՝ «égalité, complémentarité, solidarité»):

Կազմակերպությունում ընդգրկված են 58 լիիրավ, 26 դիտորդի կարգավիճակ ունեցող պետություններ, որոնցից 32-ում ֆրանսերենն ունի պաշտոնական լեզվի կամ երկրորդ պաշտոնական լեզվի կարգավիճակ: ՖՄԿ-ում ընդգրկված երկրների բնակչության ընդհանուր թիվը կազմում է 900 միլիոն, որից 274 միլիոնը ֆրանկոֆոն են: ՖՄԿ-ում ներգրավված երկրները սփռված են աշխարհի հինգ մայրցամաքներում: ՄԱԿ-ի անդամ երկրների մեկ երրորդից ավելին անդամակցում է ՖՄԿ-ին:

Ֆրանկոֆոնիայի որոշում կայացնող ամենաբարձր քաղաքական մարմինը երկրների և կառավարությունների ղեկավարների գագաթնաժողովն է, որը հրավիրվում է երկու տարին մեկ անգամ, և ՖՄԿ գլխավոր քարտուղարը: Հարկ է ընդգծել, որ ֆրանկոֆոն բազմակողմ համագործակցությունն իրականացվում է ՖՄԿ-ի և վերջինիս չորս գործիքների կողմից՝ Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալություն (Agence Universitaire de la Francophonie – AUF), TV5 Monde միջազգային հեռուստաալիք, Ալեքսանդրիայում Սենգորի անվան համալսարան (Université Senghor d'Alexandrie) և Ֆրանկոֆոն քաղաքապետերի միջազգային ասոցիացիա (Association Internationale des Maires Francophones -AIMF):

ՖՄԿ իր տրամադրության տակ ունի խորհրդատվական մարմին, որն է Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովը (ՖԽՎ/APF): ՖՄԿ գործադիր ատյաններում վերջինս ներկայացնում է ֆրանկոֆոն ժողովուրդների շահերն ու ակնկալիքները՝ որպես հիմնական նպատակ ունենալով սույն երկրներում խթանելու ժողովրդավարությունն ու իրավական պետությունը և պաշտպանելու մարդու իրավունքները ֆրանկոֆոն հանրության ներսում:

2003թ. Ուագադուգուի (Բուրկինա Ֆասո) գագաթնաժողովում Հայաստանը ձեռք է բերում ՖՄԿ-ում դիտորդի կարգավիճակ, իսկ այնուհետև՝ 2008թ. հոկտեմբերին, Քվեբեկ-Կանադայի գագաթնաժողովում դառնում է ՖՄԿ ասոցացված անդամ, և Ֆրանկոֆոնիայի հարցերով հատուկ խորհրդական է նշանակվում:

Հայաստանն իր ներկայացուցիչն ունի նաև Ֆրանկոֆոնիայի մշտական խորհրդում: Նա ակտիվորեն ներգրավված է ֆրանկոֆոնայի տարբեր ատյանների աշխատանքներում, այդ թվում՝ 2015-2017թթ. ընթացքում նախագահելով Համագործակցության և ծրագրավորման հանձնաժողովը:

Հայաստանի և ՖՄԿ-ի միջև հարաբերությունների ամրապնդման գործում կարևոր էր 2010թ. ապրիլին Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար Աբդու Դիուֆի պաշտոնական այցը Հայաստան:

2010թ. հոկտեմբերին Մոնթրոյում (Շվեյցարիա) կայացած 13-րդ գագաթնաժողովի ժամանակ Ֆրանկոֆոնիայի անդամ-երկրների և կառավարությունների ղեկավարները, ֆրանկոֆոն տարածաշրջանում ճգնաժամային իրավիճակի, նրանից դուրս գալու և խաղաղության ամրապնդման մասին բանաձև ընդունելով, առաջին անգամ իրենց դիրքորոշումն են արտահայտում Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ, մասնավորապես՝ հաստատելով իրենց լիարժեք աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ լուծման նպատակով:

2012թ. հոկտեմբերին Քինշասայում (Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն) կայացած Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի ժամանակ Հայաստանը ձեռք է բերում ՖՄԿ լիիրավ անդամի կարգավիճակ՝ դառնալով ՖՄԿ 54-րդ անդամ-երկիրը:

Ֆրանկոֆոնիայի նախարարական համաժողովի 31-րդ նստաշրջանը կայանում է Երևանում 2015թ. հոկտեմբերի 10-ից 11-ը: Համաժողովի ընթացքում հարուստ և բեղմնավոր քննարկումներ են ծավալվում Հայաստանի կողմից շեշտադրված թեմաների շուրջ:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ Ֆրանկոֆոնիայի գլխավոր քարտուղար տիկին Միկայել Ժանը և Ֆրանկոֆոնիայի երկրների ու կառավարությունների նախարարները հարգանքի տուրք են մատուցում Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր այցելության ժամանակ:

2016թ. մայիսին Հայաստանը ներկայացնում է իր թեկնածությունը Ֆրանկոֆոնիայի 17-րդ գագաթնաժողովը կազմակերպելու գործում:

2016թ. նոյեմբերի 27-ին Անտանանարիվուի (Մադագասկար) գագաթնաժողովի ժամանակ Ֆրանկոֆոնիայի երկրի և կառավարությունների ղեկավարները Հայաստանը սահմանում են որպես 2018թ. Ֆրանկոֆոնիայի առաջիկա գագաթնաժողովը հյուրընկալող երկիր, և որոշվում է, որ ՖՄԿ 2018 գագաթնաժողովը տեղի կունենա Հայաստանի մայրաքաղաք Երևանում:

Հայաստանի և ՖՄԿ-ի սերտ համագործակցությունն արտահայտվում է մի շարք ծրագրերի իրականացմամբ:

Լեզվաբանական ծրագիրը հնարավորություն է տալիս ֆրանկոֆոնիայի հետ խորացված համագործակցության հիմքեր ստեղծել այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, մշակույթը, հաղորդակցությունը և զբոսաշրջությունը: «Ֆրանկոֆոն գրքի անկյուն» ծրագրի իրագործումը մեկնարկվել է 2014թ. և ներառում է ՀՀ մի շարք մեծ քաղաքներ (Երևան, Գորիս, Գյումրի և այլն):

ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը հանձն է առել ապահովելու TV 5 MONDE հեռուստաալիքի մուտքը Հայաստան՝ այն ընդգրկելով մալուխային օպերատորների հիմնական փաթեթի մեջ:

Կյանքի են կոչվել նաև հույժ կարևոր այլ ծրագրեր:

Եվ ահա այս տարի Հայաստանում կայացավ երկրի անկախացումից ի վեր ամենամասշտաբային միջազգային իրադարձություններից մեկը՝ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթնաժողովը, որի շրջանակներում Հայաստանը երկու տարով ստանձնեց այդ կառույցի նախագահությունը: Նման միջոցառման կազմակերպումը, անշուշտ, պահանջել է թե՛ դիվանագիտական, թե՛ կազմակերպչական հսկայական ջանքեր:

2018թգ հոկտեմբերի 7-12-ը Երևանը լցված էր Ֆրանկոֆոնիայի շնչով:

«Ապրել միասին». սա Երևանյան գագաթնաժողովի կարգախոսն է: Այն արտացոլում է Ֆրանկոֆոնիայի համընդհանուր արժեքները՝ մարդու և ժողովուրդների իրավունքների պաշտպանությունը, ժողովրդավարությունը, միջմշակութային և միջկրոնական երկխոսությունը, ինչպես նաև պայքարն այնպիսի երևույթների դեմ, ինչպիսիք են այլատյացությունը, անհանդուրժողականությունը, խտրականությունը և ատելության սերմանումը:

Հոկտեմբերի 12-ին Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գլխավոր քարտուղար է ընտրվել Լուիզ Միշիկիվաբոն՝ 4 տարով: Նա Ռուանդայի արտաքին գործերի նախարարն է:

Այս մասին Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթնաժողովի փակման արարողության ժամանակ հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

ՀՀ վարչապետն ընդգծեց, որ կազմակերպության նախորդ գլխավոր քարտուղար Միկաել Ժանը հաջողությամբ ղեկավարել է կազմակերպությունը՝ մեծ ջանքեր ներդնելով կատարված աշխատանքներում:

Ի՞նչ տվեց ՖՄԿ -ն Հայաստանին. նախ՝ միջազգային կապերի ամրապնդում:

Բավական բարձր մակարդակով կազմակերպված նման լայնամասշտաբ միջոցառման հյուրընկալումը, անշուշտ, դրական է ազդել Հայաստանի միջազգային հեղինակության վրա: Հայաստան էր ժամանել 84 երկրի պատվիրակություն, ընդ որում՝ նրանցից 38-ը ներկայացված էր երկրի ղեկավարի մակարդակով:

Գագաթնաժողովի շրջանակներում Հայաստան էր ժամանել ավելի քան 3500 հյուր, իսկ Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի լուսաբանման, «Ֆրանկոֆոն լրագրողների միջազգային միության» կոնֆերանսին մասնակցելու համար՝ մոտ 600 լրագրող:

Նման մեծաքանակ հյուրերի և լրագրողների ներկայությունը բավական լավ հնարավորություն էր աշխարհի շուրջ 274 մլն ֆրանսախոսների շրջանում Հայաստանի և հայկականի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման տեսանկյունից:

Գագաթնաժողովը թերևս էլ ավելի կարևորվեց Ֆրանսիայի նախագահ էմանուել Մակրոնի և Կանադայի վարչապետ Ջասթին Թրյուդոյի Հայաստան կատարած այցով: Թեև այցը կրում էր աշխատանքային բնույթ, այն բավական հագեցած էր և առավել ամրապնդեց վերջին շրջանում զգալիորեն ակտիվացած հայ-ֆրանսիական երկխոսությունը:

ՖՄԿ 17-րդ գագաթնաժողովի ժամանակ ընդունվեց Երևանյան հռչակագիրը, որը ֆրանկոֆոն տարածքների հակամարտություններին, այդ թվում՝ Ղարաբաղյան հակամարտությանն առնչվող դրույթներ է պարունակում:

Ֆրանկոֆոնիայի օրերը միջազգային ոգևորության, ձեռքսեղմման, արվեստի ու մշակույթի փոխճանաչման տոնախմբություն էր, որ անջնջելի հետք թողեց հյուրերի վրա:

Պատմական անմոռանալի այս օրերն ավարտվեցին Ժյուլ Մասնեի Մանոն կատակերգական օպերայով, որը ներկայացվեց ֆրանսերեն տարբերակով 2018թ. ապրիլի 11-ին և 12-ին Ա. Սպենդիարյանի անվ. Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում:

Այդ բացառիկ տոնակատարության ժամանակ ակտիվ ծառայություն իրականացրին Հայաստանի Հանրապետության ոստիկանները՝ աչքի ընկնելով նաև իրենց ֆրանսերենի իմացությամբ:

Բազմաթիվ ոստիկաններ ֆրանսերենի դասընթացներ էին անցել հայկական «Ալիանս ֆրանսեզ» լեզվի և մշակույթի կենտրոնում և Ոստիկանության կրթահամալիրում: Նրանք իրենց ձեռքի տակ ունեին 17-րդ գագաթնաժողովին նվիրված «Ոստիկանության ծառայողների համար Հայերեն-ֆրանսերեն զրուցարանը», ինչն էլ հնարավորինս հեշտացրեց ֆրանկոֆոն այցելուների հետ շփումը:

Ֆրանկոֆոնիայի օրերն անկախությունից ի վեր այն խոշոր իրադարձություններից էր, որը միանշանակ ծառայեց մեր երկրի միջազգային հեղինակության բարձրացմանը, ինչպես նաև Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության ամրապնդմանն ու վարկանիշի բարձրացմանը:

Գագաթնաժողովն անցավ շատ բարձր մակարդակով, որի համար իր ամփոփման խոսքում Հայաստանի Հանրապետության վարչապետը շնորհակալություն հայտնեց բոլոր նրանց, ովքեր ներգրավված են եղել կազմակերպչական աշխատանքներում:

**Արուսյակ ՔՈՉԱՐՅԱՆ**

# ՎԱՐԴԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԸ 2800 ՏԱՐԵԿԱՆ Է

Երևանի հիմնադրման տարեթիվն է մ.թ.ա. 782 թ.: Քաղաքի հիմնադրման տարեթիվն ստույգ հայտնի է Արգիշտի արքայի թողած սեպագիր արձանագրությունից: Երևանի անվանումը ծնունդ է առել ուրարտական էրեբունի ամրոցի անվանումից: Մայրաքաղաք է 1918 թվականից: Այն հիմնադրվել է Հռոմից 29 տարի առաջ, հասակակիցն է Բաբելոնի, Նինվեի ու Պերսեպոլիսի: Հնագույն պեղումները վկայում են, որ էրեբունին վարչական խոշոր կենտրոն էր՝ ամենահզորը Արարատյան դաշտավայրում: Մեր մայրաքաղաքի անունը էրեբունի բառի փոփոխված տարբերակն է:

Երևանը ԽՍՀՄ 1-ին քաղաքն էր, որն ունեցավ գլխավոր հատակագիծ. ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի հեղինակած հատակագիծը հաստատվեց 1924 թ.: Երևանը կառուցապատվում էր բազալտով, գրանիտով, մարմարով: Ամենատարածված շինանյութերից էր համարվում նաև վարդագույն տուֆը, այդ պատճառով էլ այն անվանվեց «Վարդագույն քաղաք»:

«Էրեբունի-Երևան»-ի առաջին պաշտոնական տոնակատարությունն անցկացվել է 1968թ. հոկտեմբերին. մայրաքաղաքի հիմնադրման 2750-րդ տարեդարձը նշվում էր մեծ հանդիսավորությամբ ու խանդավառությամբ, բազմաբնույթ ու հետաքրքիր միջոցառումներով, բազմաթիվ հյուրերի ու քաղաքացիների ակտիվ մասնակցությամբ՝ իսկապես վերածվելով համաժողովրդական տոնակատարության:

Առաջին անգամ մայրաքաղաքի տոնը նշելուց հետո արխիվային փաստաթղթերում այլևս որևէ տեղեկություն չի հանդիպում դրա անցկացման վերաբերյալ, և միայն 1983 թ. ապրիլի 26-ի ՀԿԿ կենտկոմի որոշման համաձայն՝ այն դառնում է ամենամյա, իսկ այդ ժամանակ ՀԿԿ կենտկոմի քարտուղարն էր Կարեն Դեմիրճյանը: Այնուհետև, ըստ համապատասխան արխիվային փաստաթղթերի, 1984-1988 թթ. այն նշվում է «Էրեբունի-Երևան» անվամբ:

1989 թ. տոնը չի նշվում՝ պայմանավորված Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված քաղաքական իրադարձություններով, ինչի հետևանքով հանրապետությունում առաջացել էր ծանր իրավիճակ: Հարկ է նշել, որ այդ տարի որոշում է կայացվում գունավոր փաստավավերագրական ֆիլմ նկարահանել Երևանի մասին, և այն հանձնարարվում է «Հայֆիլմ» կինոստուդիային:

1990-1998 թթ. տոնը չի նշվել: 1990 թ. տոնակատարության անցկացման վերաբերյալ որևէ որոշում չի պահպանվել, սակայն Երևանի քաղխորհրդի գործադիր կոմիտեն որոշում է կայացրել «Հնաբնակ երևանցիների ընկերություն» ստեղծելու մասին, որն էլ հետագայում բավականին ակտիվ գործունեություն է ծավալում քաղաքի ավանդույթների պահպանման, ավանդական տոների վերականգնման ուղղությամբ:

Արխիվում չի պահպանվել որևէ փաստաթուղթ 1999-2001 թթ. վերաբերյալ ևս: Չնայած այս տարեթվերն այնքան էլ հեռու անցյալում չեն, սակայն չի հաջողվել գտնել որևէ տեղեկություն:

2002 թվականին արդեն կար համապատասխան որոշում, և հոկտեմբերին նշվում է Երևանի 2784-ամյակը, որից հետո ամեն տարի հանդիսավորությամբ հոկտեմբերի երկրորդ շաբաթ օրը մայրաքաղաքը վերածվում է բազմաբնույթ միջոցառումների, տարվա ընթացքում քաղաքում իրականացված բարեկարգումների հաշվետվության յուրօրինակ հարթակի: Տոնի օրը Երևանի քաղաքապետի ուղերձի տեքստը՝ ուղղված երևանցիներին, դրվեց տուփի մեջ և փակվեց: Տուփը հանձնվեց «Էրեբունի» արգելոց թանգարանին, իսկ բանալին՝ Երևան քաղաքի պատմության թանգարանին՝ մայրաքաղաքի 2800-ամյա հոբելյանին տուփը բացելու և ուղերձը հրապարակելու ակնկալիքով: Տոնակատարությանը մասնակցում էր Ռուսաստանի Դաշնության նախագահ Բորիս Ելցինը:

2003թ. հոկտեմբերի 12-ին հանդիսավորությամբ նշվում է քաղաքի հիմնադրման 2785-ամյակը՝ վերջին անգամ կրելով «Էրեբունի-Երևան» ավանդական անվանումը, որովհետև արդեն 2004 թվականից մինչև 2008 թվականն այն վերանվանվում է «Երևանի օր»: 2004 թ. տոնակատարությունն առանձնանում է նրանով, որ պաշտոնապես ընդունվում են քաղաքի խորհրդանիշները՝ զինանշանը, դրոշը և օրհներգը, որոնք Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում Երևանի 2786-ամյակին նվիրված հանդիսավոր նիստի ժամանակ Երևանի քաղաքապետ Ե. Զախարյանը մշտապես պահպանության հանձնեց Պատմության թանգարանին:

2008 թվականին վերջին անգամ «Երևանի օր» անվանումով նշվում է քաղաքի 2790-ամյակը, իսկ 2009 թվականից այն կրկին վերանվանվում է «Էրեբունի-Երևան», և բացի ավանդական անվանման վերականգնումից, ինչպես ցույց է տալիս տոնակատարության անցկացման տարեգրությունը, յուրաքանչյուր տարի այն անցկացվում է նաև առանձին խորագրի ներքո:

2009 թ. 2791-ամյակը նշվել է «Երևանը մենք ենք» հատուկ խորագրով, ինչը հատկանշական է դառնում հաջորդ տարիների համար: Այսպես՝ 2010 թ. կրկին «Երևանը մենք ենք», 2011 թ. այն համընկնում է Հայաստանի անկախության 20-ամյա տարեդարձի հետ, 2012 թ.՝ 2794-ամյակն ընթանում է «Իմ սրտի մայրաքաղաք», 2013 թ.՝ 2795-ամյակը «Իմ սրտի ուղեկից», 2014 թ.՝ 2796-ամյակը «Երևան՝ իմ տուն», 2015 թ.՝ 2797-ամյակը «Իմ ջերմ ու բարի քաղաք», 2016 թ.՝ 2798-ամյակը «Երևան՝ արևի քաղաք», իսկ 2017թ.՝ 2999-ամյակն ընթանում է «Երևան՝ սիրո քաղաք» կարգախոսով:

Այստեղ հատկանշական է երկու հանգամանք. նախ այն, որ տոնը կրկին նշվում է «Էրեբունի-Երևան» անունով, և երկրորդ՝ յուրաքանչյուր տարի այն անցկացվում է հատուկ խորագրի ներքո: Ընդ որում՝ ամեն տարի խորագիրն ընտրելիս սոցիոլոգիական հարցում է անցկացվում քաղաքացիների տարբեր շերտերի շրջանակում և նոր միայն ընտրվում համընդհանուր հավանության արժանացած տարբերակը, ինչը ոչ միայն նոր երևույթ է, կարծես այն յուրովի ապահովում է մեր համաքաղաքացիներին տոնին մասնակից դարձնելը, թեպետ խոսքն այստեղ ֆիզիկական մասնակցության մասին չէ: Ընդ որում՝ 2012 թվականից ձևավորվել է մի նոր ավանդույթ ևս. Երևանի քաղաքապետարանը տոնակատարության գունավոր լուսանկարների ալբոմը և միջոցառումների տեսագրությունները՝ որպես վավերագրեր, հատուկ կազմում և հանձնում է Երևանի պատմության թանգարանին, ինչը շատ գնահատելի է, քանի որ դրանք արդեն ստանում են պատմական փաստաթղթի կարգավիճակ:

Բոլոր տարիներին պարբերաբար զուգընթաց անցկացվել են մի շարք միջոցառումներ ու մրցույթներ, որոնցից կարելի է նշել «Ի՞նչ քաղաքը» շարադրությունների մրցույթը, որն անցկացվել է քաղաքի դպրոցների միջև:

Հետագա տարիներին «Էրեբունի-Երևանին» նվիրված ամենամյա տոնակատարությունների ցանկը համալրվեց զանազան միջոցառումներով:

Մայրաքաղաքի մարզադպրոցների սաներն ու նախաձեռնությանը միացած սիրողական մակարդակի վազորդները վազքարշավով են տոնում մայրաքաղաքի հերթական տարեդարձը: Հայաստանի ազգային հավաքականի հեծանվորդները մասնակցում են հեծանվավազքի ցուցադրական ելույթին:

Միջոցառումների շարքում տեղ է գտնում նաև ռետրո ոճի մեքենաների ցուցադրությունը:

Մայրաքաղաքի տարբեր հատվածներում տեղակայված 26 բեմերում ներկայացվում են համերգային տարաբնույթ ծրագրեր՝ դասական, ռոք, ջազային երաժշտություն:

Տոնական միջոցառումներ են տեղի ունենում նաև հյուսիսային պողոտայում, որի ժամանակ բազմազան բեմերում մանկական, թատերական, կրկեսային ներկայացումներ, նորաձևության, խեցեգործության, գորգագործության, ասեղնագործության, փայտագործության և այլ ցուցադրություններ են իրականացվում:

Տոնակատարությունն ավարտվում է «Էրեբունի-Երևան» գլխավոր միջոցառմամբ, որն, ըստ ավանդույթի, տեղի է ունենում Հանրապետության հրապարակում, իսկ միջոցառման ավարտը զարդարում է շքեղ հրավառությունը:

Այս տարի Հոկտեմբերի 21-ին նշվեց Երևանի հիմնադրման 2800-ամյակը: Զարմանալիորեն երկար պահպանված այս քաղաքն ընդունեց ամբողջ աշխարհի շնորհավորանքները, բնակիչների ջերմ ու անկեղծ բարեմաղթանքները: Այդ օրը, ինչպես ծննդյան արարողությանը պատրաստվող յուրաքանչյուր հոբելյար, նա էլ զարդարվել էր իրեն հատուկ կոլորիտային ու նրբաճաշակ գույներով: Մերթընդմերթ քաղաքի տեսարժան վայրերից լսելի էին տարատեսակ ոճի մեղեդիներ, քաղաքում տիրում էր ջերմությամբ լի եռուզեռ, մարդիկ ժպտադեմ շտապում էին կիսելու վարդագույն քաղաքի տոնական մթնոլորտը: Փողոցներում քայլելը ոչ միայն հաճելի էր, այլև անվտանգ:

ՀՀ ոստիկանության ծառայողները մեծագույն նվիրումով և պատասխանատվությամբ էին պահպանում և հսկում քաղաքում տիրող տոնական հաճելի մթնոլորտը:

Բարեխիղճ ծառայությամբ առանձնանում էին նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ծառայողները: Հասարակական կարգի պահպանումը հանձնարարված էր նաև ակադեմիայի ու քոլեջի հարյուր սովորողներին, ովքեր անշեղորեն կատարում էին իրենց առջև դրված խնդիրները՝ կրթահամալիրի ծառայության բաժնի ողջ անձնակազմի հրամանատարության ներքո:

Նրանց շնորհիվ էր նաև, որ քաղաքացիներն իրենց զգում էին անհոգ, պաշտպանված և անվտանգ:

**Լիլիթ ՈՍԿԱՆՅԱՆ**
**Կրթության որակի ապահովման բաժնմունքի առաջատար մասնագետ**

# ՍԱՄԲՈ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՂԹԵՑԻՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՍԱՆԵՐԸ

Սամբոն (ռուսերեն՝ Самбо-защита без оружия) մարզական ըմբշամարտի տարբերակ է, որը ստեղծվել է ըմբշամարտի ազգային ձևերի (այդ թվում նաև հայկական կոխի) առավել արդյունավետ հնարքների համադրմամբ: Այն ձևավորվել է ԽՍՀՄ-ում 1930-ականներին:

Սամբոյի պաշտոնական մրցումներն անցկացվում են ըստ առանձին տարիքային խմբերի և քաշային կատեգորիաների: 1938 թվականին ԽՍՀՄ-ում ստեղծվել է սամբոյի համամիութենական ֆեդերացիա: 1996 թվականին Սիրողական ըմբշամարտի միջազգային ֆեդերացիան սամբոն ճանաչեց որպես սպորտի միջազգային ձև և իր կազմում ստեղծեց սամբոյի ինքնուրույն հանձնաժողով: Սամբոյի ազգային ֆեդերացիաներ են գործում ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Մոնղոլիայում, Բուլղարիայում, Ճապոնիայում և այլ երկրներում:

Հայաստանում սամբոն տարածվել է 1950-ական թվականներին: Տարբեր տարիների ընթացքում հայ մարզիկները հռչակվել են Եվրոպայի և աշխարհի առաջնության չեմպիոններ: Գոյություն ունի նաև սամբոյի մարտական տարբերակ (ինքնապաշտպանություն՝ զինված կամ անզեն հակառակորդից), որն ընդգրկված է ՀՀ ոստիկանության մարտական պատրաստվածության ծրագրում, և այդ ծրագրից ելնելով՝ պարբերաբար անցկացվում են մրցումներ ուստիկանության տարբեր ստորաբաժանումների ծառայողներից կազմված թիմերի միջև:

2018թ. հոկտեմբերի 17-ից 19-ը Երևանի «Դինամո» ՄՀԿ մարզահամալիրում անցկացվեց ՀՀ ոստիկանությունում սամբո ըմբշամարտի առաջնությունը:

Կրթահամալիրը գրավեց պատվավոր առաջին հորիզոնականը:

Անհատական պայքարում կրթահամալիրի սամբոյի թիմի ութ մարզիկները գրավեցին հետևյալ մրցանակային տեղերը.

- 57 կգ քաշային կարգում առաջին հորիզոնականը գրավեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի 1-ին կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ Հակոբ Լևոնի Քոչարյանը,
- 82 կգ քաշային կարգում՝ կրթահամալիրի ուսումնական կենտրոնի ավագ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Դավիթ Սամվելի Խաչատրյանը,

Երկրորդ մրցանակային տեղերը զբաղեցրինգ

- 74 կգ քաշային կարգում՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի 1-ին կուրսի սովորող, ոստիկանության կրտսեր սերժանտ Վահագն Վիրաբի Թախթարյանը,
- 100 կգ քաշային կարգում՝ կրթահամալիրի քոլեջի երկրորդ կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ Հայկ Ռոմանի Մելիքյանը, իսկ 100+ կգ քաշային կարգում՝կրթահամալիրի քոլեջի երկրորդ կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ Վազգեն Վարուժանի Աղաբեկյանը:

Երրորդ մրցանակային տեղերն զբաղեցրինգ

- 62 կգ քաշային կարգում՝ քոլեջի առաջին կուրսի սովորող, ոստիկանության ենթասպա Վիլեն Երվանդի Մարգարյանը, ինչպես նաև քոլեջի առաջին կուրսի սովորող, ոստիկանության ավագ սերժանտ Արայիկ Անդրանիկի Ղազարյանը,
- 68 կգ քաշային կարգում՝ կրթահամալիրի քոլեջի երկրորդ կուրսի երկրորդ դասակի սովորող, ոստիկանության ավագ սերժանտ Սարգիս Բենիկի Գաբրիելյանը:

Թիմային 2-րդ տեղը գրավեց Արցախի Հանրապետության ոստիկանության թիմը, 3-րդը՝ Արարատի մարզային վարչության թիմը:

Հաղթողներն արժանացան դիպլոմների և դրամական պարգևների:

**Ա. ԳԻՐԳՈՐՅԱՆ**
**Մարտական, ֆիզիկական և հատուկ տակտիկական պատրաստականության ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ**

# ՊԱՏՎԱԲԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

**«Միայն գերագույն բարօրությանը ձգտող կյանքը կարող է լինել գործունյա»**
***Արիստոտել***

Համայն աշխարհն արագընթաց մոտենում է հազարամյակների ջրբաժանին և նոր հազարամյակի շեմից ներս մտնելով՝ փորձում է վայրիվերումների հորձանուտում հասկանալ իր հիմնական ձեռքբերումները: Ի՞նչ է խոստանում նոր հազարամյակը՝ հասարակական առաջընթա՞ց, թե՞ նոր պատերազմական արհավիրքներ, երեխայի ժպի՞տ, թե՞ կործանված ապագա: Սակայն աշխարհը՝ աշխարհով, իսկ մենք՝ մեզնով: Ձեռքբերումները բոլորիս համար պարզ են. դեռևս պետք է նաև պարզենք, թե ո՞ւր ենք գնում, ի՞նչ հասարակություն ենք կառուցում, ի՞նչ տեղ պետք է զբաղեցնենք աշխարհում և ի՞նչ դերակատարում կարող ենք իրականացնել, ինչպիսի՞ պետություն պետք է ստեղծենք, ի՞նչ պետք է պաշտպանենք, հոգևոր արժեքների ո՞ր համակարգն ընդունելի կլինի... Հարցերի այս շարանը կարելի է անվերջ շարունակել, բայց ո՞րն է դրանց պատասխանը, և ո՞վ պետք է պատասխանի:

Բոլորն էլ մի պատասխան կարող են տալ, յուրաքանչյուրը՝ յուրովի: Կարևորն այդ բոլոր տարակարծությունների մեջ ընդհանուրը գտնելն է, իսկ ընդհանուրը գտնելու համար անհրաժեշտ է մեկնակետ՝ հիմնված մարդկային և հասարակական հարաբերությունների զարգացման վերաբերյալ ձևավորված որոշակի հայեցակարգի վրա:

Այսպիսի հայեցակարգի գոյությունը հնարավորություն է ընձեռում առաջադրել որոշակի նպատակներ, ձևակերպել վեհ գաղափարներ, իմաստավորել կյանքը, կանխատեսել հետագա ընթացքի բնույթը: Ինձ համար այդպիսի մեկնակետ և այդպիսի հայեցակարգ դարձան իմ ընտրած մասնագիտության սկզբունքները և ճանապարհին եղած խոչընդոտները, որոնք ամբողջանում են արդար և պայքարող էությանս հետ: Հույսով և հավատով ցանկանում եմ իրագործել ներքին մղումներս՝ ունենալով խաղաղ և օրինական երկիր:

**Հայկ ԽԱՉԱՏՐՅԱՆ**
**Ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ**

# ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՀԱՐՑԵՐԻ ԱՆԿՅՈՒՆ

1. Ինչպես հայտնի է, շատ երկրներում ձմռանը ճանապարհներին աղ են լցնում՝ ճանապարհատրանսպորտային պատահարները նվազեցնելու նպատակով: Սակայն Ֆինլանդիայում իշխանությունները որոշեցին հրաժարվել որոշ ճանապարհներին աղ լցնելու պրակտիկայից, քանի որ դա հանգեցնում էր հակառակ արդյունքի՝ ճանապարհատրանսպորտային պատահարների աճին:

Ինչո՞ւ էր Ֆինլանդիայի որոշ ճանապարհներին աղ լցնելը նպաստում ճանապարհատրանսպորտային պատահարների աճին:

2. Հայտնի ֆիզիկոս Ռոբերտ Վուդը ուսանողական տարիներին սնվում էր ուսանողական ճաշարանում: Մի անգամ նա ամբողջությամբ չկերավ ընթրիքին մատուցված կերակուրը և բոլորից աննկատ դրա մեջ լցրեց լիթիումի քլորիդ: Վուդը գիտեր, որ լիթիումի քլորիդը բացարձակ անվտանգ է, բայց միևնույն ժամանակ այն հեշտ է հայտնաբերել սպեկտրային վերլուծության մեթոդի կիրառմամբ:

Ի՞նչ էր այդ եղանակով ցանկանում ստուգել ապագա գիտնականը:

3. Գուշակե՛ք հանելուկը: Դա կարող է գետնից բարձրացնել նույնիսկ երեխան, սակայն գետի մի ափից մյուսը դա չի կարող նետել նույնիսկ մեծահասակը:

**Պատասխաններ՝**

Ֆ.Ջուստգ:
Ոչ մի ոտքերի չունեցող մարդ, որը նստած է աթոռակի վրա, ոչ մի ձեռքերի չունեցող մարդ, որը ինչ-որ բան է գրում գրչի միջոցով, ոչ մի գլուխ չունեցող մարդ, որի գլխի վրա գլխարկ է դրված:
Ոչ մի ոտքերի չունեցող մարդ, որը նստած է աթոռակի վրա, ոչ մի ձեռքերի չունեցող մարդ, որը ինչ-որ բան է գրում գրչի միջոցով, ոչ մի գլուխ չունեցող մարդ, որի գլխի վրա գլխարկ է դրված:

**Կազմող՝**
**Միսակ ՄԱՐԿՈՍՅԱՆ**
**Քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ**

# ԴՈՒ ԻՄ ԿԱՐԵՎՈՐՆ ԵՍ

Վաղուց ոչինչ չէի փնտրել, և ամեն ինչ շարժվում էր ճակատագրի թելադրանքով:Ամեն ինչ ունեի ու սիրո պակաս չէի զգում: Սակայն հայտնվեցիր դու: Ամեն դեպքում զգույշ էի, շատ զգույշ, բայց ժամանակն էր զգացմունքներիս հետ հաշվի նստելու: Շատ չանցած՝ մոռացա զգուշությունս, համակրանքս դադարեց համակրանք լինելուց, զգացմունքս ուրիշ անուն էր ցանկանում: Այդ ամենը ստիպված եմ որպես մի գեղեցիկ երազ ընկալել, որ երազուն հոգուս չսնեմ քո կողքին լինելու անհրաժեշտ ու խելագար ցանկություններով: Այդ ե՞րբ հասկացա, որ սիրել նշանակում է պարզապես ապրել, ապրել սիրած էակի հույզերով ու ապրումներով, հեռուհեռվից շնչել ու արտաշնչել նրա հետ...

Այդ զգացմունքը թևեր է տալիս ճախրանքի, հնարավորություն է տալիս ամեն վայրկյան քո կողքին հայտնվելու, թևեր, որոնց ամրության համար քո մի ժպիտն էլ բավարար է...Այդ թևերն ինձ շատ են բերելու քեզ մոտ, ու մեր հոգիները զրուցելու են առանց բառերի, առանց խոսքերի, բայց այնքան լավ ենք հասկանալու միմյանց, իսկ այդ լեզուն, որին կկոչեմ սիրո լեզու, մենք ենք հորինելու մեր լռությամբ, մեր իրար մոտ լինելու, բայց կարոտով մնալու զսպվածությամբ, քեզ ունենալու և միաժամանակ չունենալու երկյուղով...

Բայց անունն էլ այնքան էական չէ: Էականը մաքրությունն է, պարզությունը, որը մարդկանց հեռու է պահում ավելորդ կասկածներց, ազնվությունը, վերջապես, որ ավելորդ ու անիմաստ հարցեր չի տալիս:

Դու իմ կարևորն ես: Կարևորի մասին կարելի է շատ խոսել, բայց նախ կարևոր է լիարժեք կարևորել այն, ինչը դառնում է ամենակարևոր:

**Անահիտ ԲԱԴԱԼՅԱՆ**
**Ակադեմիայի իրավագիտական ֆակուլտետի 4-րդ կուրսի սովորող**

## ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆՔ

### Բարև՛ տարեք իմ մայրիկին

Բարև՛ տարեք իմ մայրիկին,
Ասե՛ք՝ զինվոր քո որդին,
Ամուր կանգնած սահմանին,
Մեջքը հենած սեգ Մասիսին,
Սուր հայացքով նա արծվի
Տունն է հսկում մեր պապերի,
Որ թշնամին՝ բիրտ, վայրենի,
Հայոց հողը չմտնի:

Չմտնի ու չպղծի
Մեր վանքերը հինավուրց,
Որ կյանք ունեն դարերի
Ու պատմություն շատ վաղուց:
Ասե՛ք՝ զինվորն եմ երկրի,
Լույսն ու հույսն եմ մայրերի,
Այն մայրերի, ում որդիք
Ունեն մի կյանք, մի Հայրենիք:

**Կարինե ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**
**ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական զարգացման վարչության պետի տեղակալ, ինքը և ուս. գործընթացի կազմակերպման և վերահսկման բաժնի պետ, ոստիկանության գնդապետ**

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «Տիգրան Մեծ» ՓԲԸ-ում՝ Արշակունյաց 2:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 30. 10. 2018թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Պատասխանատու քարտուղար՝ Արուսյակ Քոչարյան: